Պարույր Սևակ

Մի, մի

Մի՛ չարանա վրաս:
Եվ իմ մեղքը ի՞նչ է:
Սովա՞ծ թե կուշտ եմ ես՝
Կարևո՛ր չէ բնավ:
Խաշ մեջտեղում չկա՛,
Բայց սխտորի հոտը
Նվաճել է հիմա և աննվաճ օ՛դը:
Ես փորձում եմ գոնե քիթըս բռնել:
Եվ իմ մեղքը դա՞ է:
Մի՛ չարանա վրաս:
Մի՛ տանջիր ինձ հարցով:
Լոկ ա՛յն գիտեմ հիմա,
Որ լոտոսի համար չարժե՛ սարքել ճահիճ
Եվ ծով չորացընել՝ ակվարիումի համար…
Մեծ տուրք կվճարեմ ես լռության դիմաց,
Միայն թե, խնդրո՛ւմ եմ,
Մի՛ տանջիր ինձ հարցով:
Եվ մի՛ հուսադրրիր:
Ես չե՛մ հուսահատվել:
Իմ տարիքում, ճի՛շտ է, էլ չեն առնում հասակ,
Բայց մարդն էլ է ընձուղտ,

Եվ իմ վիզը հիմա
Երկարում է - ձգվում
Ու բարձրանում
Այս բազմահարկ բոլոր շենքերից վեր,
Որ պաղ հորիզոնից մի բերան մով պոկի
Ու որոճա՛ դանդաղ:
Ինձ մի՛ հուսադրիր:
Մի՛ նկատիր նաև:
Ես այլևս չկա՛մ,
Ինչպես չկա երկինք
(Լուրթը խաբկանք է լոկ).
Ինչպես չկա և ջո՛ւր
(Կա «երկու հաշ, մեկ օ»).
Ինչպես չկա և սե՛ր
(Դու ապրում ես հեռվում):
Թող չլինի և ա՛չք:
Մի՛ նկատիր դու ինձ…
Եվ մի՛ փնտրիր իզուր:
Ես կլինեմ ու կամ:
Չէ՞ որ հետք են թողնում մինչև անգամ պորտով:
Ես սողալու համար հարմարություն չունեմ,
Չունեմ նաև թևեր,
Բայց ունեմ ձեռք մի զույգ,
Որոնցով ես հիմա իմ աչքերն եմ փակում.
Քեզ՝ չեմ ուզում տեսնել,
Իսկ դու ինձ մի՛ փնտրիր…

04.XII.1961թ.
Երևան